

Կայացավ մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի ասուլիսը

Անսալով մարզպետ Գաբրիել Գյոզալյանի՝ 09.06.2016 թ. կայացած ասուլիսի ժամանակ „Արագած աշխարհ,, թերթի գլխավոր խմբագիր Վարդեան Գրիգորյանի առաջարկին, մարզպետի հանձնարարությամբ կկազմակերպվեն նաեւ աշխատակազմի վարչությունների պետերի ասուլիսներ:

Առաջին ասուլիսը կազմակերպեց կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հասմիկ Նազարյանը, որը կայացավ հուլիսի 14-ին: Վարչության պետը մարզային թերթերի գլխավոր խմբագիրներին եւ լրագրողներին ներկայացրեց 2015-2016 ուսումնական տարվա արդյունքները, ինչպես նաեւ իր պաշտոնավարման 100-օրվա ընթացքում կատարած աշխատանքները:

Նշվեց, որ մարզպետարանի ենթակայությամբ գործում են 118 հանրակրթական դպրոց՝ 17022 աշակերտով, 1 հատուկ դպրոց՝ 45 աշակերտով, ԿԳ նախարարության ենթակայության 3 ավագ դպրոց եւ համայնքային ենթակայության 36 մանկապարտեզ: Հանրակրթական դպրոցներում գործում է 42 հանրակրթարան:

Ամփոփելով ուսումնական տարին, վարչության պետը տեղեկացրեց, որ 2016 թվականի հիմնական դպրոցն ավարտել է 1289, միջնակարգը՝ 1146 աշակերտ: Մարզի շրջանավարտները հաջողությամբ են մասնակցել միասնական քննություններին եւ ընդունվել են հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ: Դավթաշենի միջնակարգ դպրոցի շրջանավարտ Գոռ Հարությունյանը միասնական 3 քննությունից էլ ստացավ առավելագույն՝ 20 ական միավոր եւ դարձավ ոսկե մեդալակիր:

Վարչության պետը ամենայն մանրամասնորեն ներկայացրեց դպրոցներում առկա թափուր աշխատատեղերի եւ դրանք՝ մրցույթներով համալրման գործընթացը, հեռավոր եւ փոքր համայնքների դպրոցների հիմնախնդիրները, մասնագիտական մի շարք հարցերին վերաբերող խնդիրները, նշեց մշակույթի, սպորտի ոլորտում իրականացրած ծրագրերը:

Լրագրողները վարչության պետին դիմեցին իրենց հետաքրքրող հարցերով, որոնք առնչվում էին դպրոցների կառավարման խորհուրդների գործունեությանը, կրթության ոլորտում նախորդ տարիների հետ կապված մի շարք հարցերի, կրթության բարոփոխման գործընթացին եւ այլն:

Կարեւորելով ասուլիսի անհրաժեշտությունը, դրան մասնակցում էր նաեւ մարզպետ Գաբրիել Գյոզալյանը, ով քննարկված հարցերի վերաբերյալ արտահայտեց նաեւ տեսակետներն ու պարզաբանումները: